

ընդհատ արշաւանքներ կատարէին դէպ ի այս հիւսիսային աշխարհը, որ ամենայն հաւանութեամբ, նոցա նախնական հայրենիքն էր, ուր ապրում էին նոցա հետ մի և նոյն ծագումից յառաջանած ազգութիւններ, նոցա սահմաններում ամուր քաղաքներ շինէին, և փոխարքայութեան նման մի իշխանութիւն հաստատէին:

Այստեղ մենք ընդհատում ենք մեր քաղուածքները Պ. Նիկոլսկու ներածութիւնից և անցնում ենք բուն երկին, ուր իւրաքանչիւր բնեւորացիք արձանագրութիւնը ունի իւր արանսկրիպիան, թարգմանութիւնը և գիտնական մեկնութիւնը. մենք դիտաւորութիւն չունինք տալ հայ ընթերցողին ամբողջ զբոյծ թարգմանութիւնը, այլ շատաւաւու ենք նորա համառօտ բովանդակութեամբ:

Շարունակելի

Ի. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

փետր. 14, 1897, Մոսկով.



ԱՍՏՈՒԱԾԱՆԵՌԻՆԸ ԳՐՈՅ ԶԱՐԿԵ

ԱՌ ՆԱԽՆԻ ՀԱՅՍ

(ՀՈՏ ԳՐ. Ս. ՉԵՐՏԻՐ)

ՀԱՅ ազգն, յետ դարձին ի քրիստոնէութիւն, մեծ եռանդ մ'ունեցաւ իրեն մերձաւոր բարգաւաճ ազգաց զբաղմանական զանձերը իւրացնելու: Եւ աստի յառաջ եկաւ այն փափաքն, հնչեցնելու հայ ականջաց ս. Գրոց խօսքերը՝ իւր մայրենի քաղցրաձայն բարբառովն, — որ և փութով գործադրուեցաւ: Վասն զի Սահակայ և Մեսրոպայ ժամանակին եղած ս. Գրոց թարգմանութիւնն՝ ամբողջ ազգին պիտանի և մատչելի ըլլաւ Աստուածաշունչ մատենանը, ազգի մը՝ որ ամենայն փութով և ջանքով կ'աշխատէր հշմարտութեան այդ անզուգական զանձուն խելամուտութեան մէջ խորաթափանց լինել: Եւ այդ յայտնի կ'երևի այնու, որ Եղիշէ՝ պատմելով Վարդապետաց պատերազմը՝ կը դրուատէ յոյժ

զսպարապետն Վարդան, ազնուատուճմ սերունդը, թէ նա իւր պատանեկութենէն ի վեր կրկին Կտակարանաց ևս հմուտ էր: — Նոյն պատմիչն կ'աւանդէ մեզ Ղեւոնդայ վարդապետի խրախուսիչ խօսքերը հաւատոց համար Պարսից դէմ՝ ըրած պատերազմի ատեն, յորում նա՝ յետ մէջ բերելու սուրբ գրքէն բաւական վկայութիւններ՝ կը յաւելու: « Եւ այլ զի՛նչ ևս երկրորդեցից առաջի ձերոյ քալ նահատակութեանդ, զի քան զիս տեղեկագոյնը և հմուտը էք սուրբ Կտակարանացն »: — Եւ ի նոյն Եղիշայ՝ կ'աւանդուի դարձեալ, թէ միանձանց սեփական գործ համարուած էր մեկնութիւն ս. Գրոց՝ ըստ չափու շնորհացն Աստուծոյ, ի միխթարութիւն ունկնդրաց:

Հետեւեալ ստորէն պիտի լուսաւորեն սակաւ մի այս խորհրդածութեան ծանօթութիւնը, որ ս. Գրոց մէջ կայ ըստ իւր գերբնական յատկանշին:

Արդ հարկ է քննել թէ որ գրքերն աւստուածաշունչ կամ կանոնական կը համարուին առ նախկին Հայս. որովհետեւ հին ազգի մը աստուածային ներշնչման մասին ունեցած վարդապետութիւնը կրնանք այժմ սահմանել բուն իսկ նոյն ազգին կանոնական գրոց ցուցակէն. և Փորոշն Աշորի սոյն եկեղեցւոյ զբաղմանութիւնն ևս՝ այսպիսի հետազոտութեան նիւթ կը մատակարարէ: Աստուածաշունչ գրոց հայկական թարգմանութեան ծագման և ժամանակին վրայ յուսովւն խնդրոյն պատասխան՝ տրուել է ցարդ նախնարար այն տեղեկութեամբ, զոր Մովսէս Խորենացի կ'աւանդէ իւր Հայոց պատմութեան մէջ: Սակայն առ Ղազարայ փարպեցւոյ կայ ինչ սեփական դէմ առ վերոյիշեալ տեղեկութեան Խորենացւոյ, վասն զի Ղազար ևս ծանօթութիւն մի կու տայ ս. Գրոց, գէթ հին Կտակի կանոնի մասին: Եւ մինչդեռ վերջինս՝ բաւական կը համարի աւանդել թէ կրկին Կտակարանը ևս միանգամայն թարգմանուեցան ի հայ, Մովսէս հին Կտակարանի թարգմանեալ գրոց քսան երկու թիւը կ'որոշէ: Սակայն ըստ զերոյ իսկ Ղազարայ՝ եթէ կրկին Կտակարանը միանգամայն թարգմանուեր են, այնու դրական կերպով հաստատուած կ'երևի արդէն իսկ

1. Մատենադր. Վենետ. էջ. 84.

2. Նոյն. էջ. 161:

3. Լ. Հուկ. Ներած. Ի Նոր Կտակ. — Ա. Մայր. Ներած. Ի Նոր Կտակ. 358. — Եփեղ. Բագր. Բ. 728-730. — Կաւլէն. Ներած. 170:

4. Գ. Գրեք. Գլ. ԾԻ:

5. Պատմ. Հայ. Վենետ. 1892. էջ. 52:

1. Quadro delle opere, etc, Venezia. 1825.

2. Մատենադր. Վենետ. 1859. էջ. 81.

եղած են թաղրութիւնն, թէ յամենայն դէպս թարգմանուելոյ են միայն կանոնական համա-
րեալ գրքերն. իսկ Մովսիսի տուած տեղե-
կութիւնն կը ցուցնէ որ նախին Հայոց Հին
Վտակարանի կանոնն կը պարունակէր միայն
քաանեկելու գիրքը:

Բայց արդեօք Հին Հայկական եկեղեցին
ընդունած չէ աւանդեալ կանոնին մի քանի
գրքերը. — արդեօք ո. Գրոց երկրորդակա-
նոն մասերը մերթիւր է:

Բայտ է թէ Հայկական Թարգմանութիւնն,
ինչպէս որ է, յունական բնագործ վրայէն կա-
տարուած է:

Քննադատական Հետազոտութիւնն վերջիւ
կարծիք մի յայտնեց, իբր թէ Մովսիսի խո-
րենացւոյ Ե դարու եպիսկոպոսի անուամբ
համբաւեալ « Պատմութիւն Հայոց » գիրքն
հաւաստի չէ¹. — և նոյն այդ կարծիքն ամրողել
այդ երկասիրութեան հիւսանածը կը դնէ ի
մէջ վեցերորդ և և իններորդ դարուց²: Բայց
միթէ այս գրութիւնն սուտանուածութիւնը կը
զօրե՞ իբր անհիմն ցուցնելու անոր սուած
տեղեկութիւնը ո. Գրոց կանոնին վրայ: Ոչ.
Վասն զի Խորենացւոյ աւանդածն ո. Գրոց
Թարգմանութեան ծագման մասին՝ այնպէս
քաջ կը համաձայնի Փարպեցւոյ դրածին, որ
նոյն իսկ մի քանի տարբերութեանց պատ-
ճառու, հարկ է ըսել թէ Մովսէս ի Ղազա-
րայ, կամ երկուքն ևս հասարակաց աղբեր-
մը՝ եթէ ոչ պարզաբար ուղղակի՝ այլ անուղ-
ղակի կախումն ունեցած են: Եւ մինչ Ղա-
զարայ տուած տեղեկութեան աղբիւրն Ե
դարու 70է տարւոյն է, Մովսիսի պատմու-
թեան աղբիւրն ևս այս կանխագոյն ժամա-
նակին մէջ գնելի է: Հետեաբար սորա աւան-
դած մասնաւոր ինչ հանգամանք կրնան իբր
անհաւաստի տեղեկութիւնք կամ սխալ իրք
համարուիլ՝ հաստատագոյն միայն փաստից
զօրութեամբ. վասն զի Ստուածայնիչ Հայ-
կական Թարգմանութեան յունարէն բնագործ
վրայէն լինելն՝ չի բաւեր Հայոց եկեղեցւոյ
միջէն մերժելու ո. Գրոց կանոնը, քանի որ
հայ եկեղեցին ևս ունէր ինքնագոյութիւն մի
յունականին դիմաց:

Մովսիսի աւանդած տեղեկութեան ճշդու-
թիւնն հարկ է ենթադրուիլ կրկին հնարաւոր
իրօք, որովք կը լուսաւորուի ընդ կարծեօք
գտնուած գործ մի, և զէթ իրականութիւն
կ'առնու մին կամ միւսն: Դրական փաստից
պակասութեան պատճառաւ շատ հաւանա-
կան չերևի ըստ ինքեան կարծիք կարծիք

մի, թէ Հայք իրենց ըրած հետազոտութեամբ
մերթիւր են ո. Գրոց մի քանի գրքերը, Հե-
տեաբար հարկ էր ապակովագոյն համարել
միւս կարծիքը, թէ Հայք Հին Վտակարանի
մի քանի գրքերը չեն ընդունած՝ անոնց նոյն
իսկ երրայական քննադատութեան առջև ան-
ընդունելի լինելուն համար: Վասն զի, առ-
դէն իսկ երրորդ դարէն ՚ի վեր ժանսթ է ՚ի
այն կարծիքն՝ իբր թէ երրայական կանոնն
Քրիստոնէից համար ևս կանոնասու եղած
է: Յիրաւի իսկ առ հայ մասնաւորիւր կը
գտնուին երրայական գաղափարաց տեղեկու-
թեան և հմտութեան նշանքն, և գուցէ այդ
գաղափարք ուղղակի կամ քրիստոնէական
կրօնից միջոցով հասեր են իրենց: Որինակ
իմե, Եղիշի³ կը ճանչնայ Հրէից հաւատքն
ի վերստին գալուստ Գաւգ.՝ յազատութիւն
իւր ազգին, ի շինութիւն Երուսաղեմի,
նոյնպէս դարձել անոնց աւանդութիւնը Քրիս-
տոսի համար⁴: Իսկ Եղիշէ⁵ գրած աւան-
դութիւն մի, որ Գ. Թագ. ԺԶ. 34. մասը
կը լուսաբանէ, թէ Երիզով իւր կրկին շինու-
թեան միջոց կառուցաւ իւր առաջին տեղւոյն
կողմը, զէպ ուղիղ Սոգոմայ կողմանց մաս:
Նոյն Եղիշէ⁶ դարձեալ կ'աւանդէ ՀԱ սաղ-
մոսին փարսեցւոց տուած մեկնութիւնը՝ Ու-
ղոմոնի վրայ իմանալով զայն, հակառակ
Թարկունի և բազմաթիւ րաբորենաց՝ որք
Մեծիայի վրայ կ'առնուին:

Արդ, պիտի քննենք յառաջիկայս թէ հայ-
կական գրականութիւնն ինչ վկայութիւն կու
տայ ո. Գրոց կանոնի վրայ: Եւ այդ մասը
իւր մէջ կը պարունակէ Եղեկայ՝ Եղծ ա-
ղանդոց (450), Ղազարայ Փարպեցւոյ՝ Պատ-
մութիւն Հայոց և Թուղթ առ Վահան (470),
Եղիշէ (449-480): Այս վերջինս ունի պատ-
մութիւն Վարդանանց պատերազմին, Ճառ
միանձանց, Մեկնութիւն Հայոց — մերի և գրոց
Արարածոց, Յետաւայ, Գատաւորաց, իսկ
նորա անուամբ առ մեզ հասած ճառից վա-
ւերականութիւնն երկբայելի է իրենց ոճոյն
տարբերութեան պատճառաւ⁷: Սակայն Թա-
բոր լերան վրայ անոնց մէջ տրուած տեղե-
կութիւնը՝ յար և նման է յամի 570 Անտոնի-
նեան ուղեւորութեան՝ աւանդածին, թէ հոն
երեք սրբաւայրք կային: Բաց աստի շատ

1. Կաւլէն. Ներած. էջ 26.

2. Եղծ աղան. Ա. 26, էջ 103.

3. Նոյն. Գ. 8, էջ 263.

4. Մեկն. Յետաւայ. — Մատենագր. էջ 174.

5. Մեկն. Յետ. — Մատենագր. էջ 181.

6. Յետաւայ ի Հայրապետ. Ներշնչի:

7. Քէփլեր, Ուղեւորաբիւն և այցելոյն յարեւելս:

1. Տեղւոյն չէ այս կարծեաց փաստերը քննել:
2. Ֆետեյ. Եկեղ. Բազմ. Մովս. Խորեն.
Հատ. Ը. էջ 1387:

գեղեցիկ վկայութիւններ կը բովանդակեն Պետրոսի և Հռովմայ եկեղեցւոյ գլխաւորութեան վրայ, որով հարկ է Չ գարու երկասիրութիւն համարել զանոնք: Հետեւաբար գրեթէ Եղիշեայ ժամանակակից կրնան ենթադրուիլ, և կարելի է ևս հետեւեալ ապացուցական կերպով անոնց հեղինակութիւնը զօրացնել: Վասն զի Յովհաննու մանդակունւոյ ճառքն ևս, որոց վաւերականութիւնն նմանապէս երկրայական է, մեծ յարգ ունին, թէ և շատ հին ժամանակի գրուածք գուցէ չհամարուին: Մատենադարաց, ինչպէս Եղբւկայ բազրեանդայ եպիսկոպոսին, Յովհաննու մանդակունւոյ իրրե կաթողիկոսի՝ ունեցած դիրքն հայկական եկեղեցւոյ մէջ, անոնց հեղինակութեան և վկայութեան արժէքը կը բարձրացընեն:

Շարաշարեղի

ՀԱՅԿԱԿԱՆ Ք



Ա

Սուտ-Սերէոսի (Սեր. ապ. Պատկ. էջ 4) պատմութեան սկիզբը՝ այսպիսի հաստատած մը կայ. « Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից... » և ցուցից համառատաբար զարդեաց ժամաւ և նակացս զաղետեցս վերաբերութեան զանս և ի գառոշոյս հինգ բազառոշացն յիշատակեալ չով » :

Այս հաստատածը կը կրկնուի միևնոյն ձևով աւ միևնոյն էջը երկրորդ տեղամ. « Դրոշմեալ ի վերայ յիմի զանս և գառոշոյս հինգ բազառոշացն Հայոց և Պարթեաց » :

Որոշը եւս այս հինգ թագաւորները, այս մասին հեղինակն աւելի բան մը չի յայտներ. ոչ ալ ամբողջ Ա. և Բ. գլխութեան մէջ ուրիշ որ և իցէ հետք մը կայ այսպիսի հինգ թագաւորներու մասին ։ Իրաւ է թէ յէջ 9 կը յիշուին Արշակ ՄԵԺ և անոր չորս որդիներ, որ, բայց ոսոնք այն հինգ թագաւորներուն հետ յարաբերութիւն չունին ։ Պատկանեան ևս այս մասին ծածոթութիւն մը չէ տուած ։ Թայտնապէս հաստատեն այլալուծիւն կրած է. բնագիրը պիտի լինէր հին բազառոշացն ։

և երկրորդ գրիչ մը հինգ օրինակած է տեսլելով. ինչ որ կը տեսնենք երբ համեմատենք նայն հաստատածին երրորդ կրկնութիւնը՝ զարձեալ ի նոյն էջ. « Գրեցի ի վերայ արձանիս այսորիկ... զամս տաւաշին բազառոշացն Հայոց » ։ Ուր՝ տաւաշին = հին :

Բ

Առձեռն բառարան կը նշանակէ հայ. հռչ բառ մը, « վերքի հոսած արիւն, շարաւ, թարախ » նշանակութեամբ ։ Չենք գիտեր թէ որ գրեւն է այս բառը ։ Կրնայ երկու կերպով մեկնուիլ.

Ա. Կրնայ զայ նիս. pû արմատէն. հմմտ. Սանս. Պոնչ, Պոնչի « հոտիլ, նեխիլ, փրտիլ » . Պոնչս « հու, շարաւ, թարախ » . Պոնչանս նոյն նշ. Պոնչի « Շարաւ, հու » (Ա. Վեդ). Պոնչս « նեխահոտ, հոտած » . Պոնչիկս նոյն նշ. ։ Չանք. Պոնչ « հոտիլ, նեխիլ, փախիլ » . հմմտ. Վենդ. Չ. 28. Յեզիձա աեհոն ևնասաո ֆրիքիքիտիձա պոնչիտիձա « եթէ այդ դիակը փտաի, նեխի » . պոնչիտի « նեխում, փտում » . Վենդ. Ի. 3. պոնչիոյն անիոյն « (դէմ դնել շարաւքի) նեխումի (փտումի), աղտեղութեան » ։ Բուն. πύον կամ πύον շարաւ, թարախ. Հիպպ. (Դ. դար. Ն. Բ.) πύον նոյն նշ. πύον թարախտիլ. Արիստ. շնչ. 20,3 և այլն. πύ-ծ-ա փտեցնել. Հոմ. Իլ. 4,174. 14, 395. Ոդ. 1,161 ևն. πύδουμαι փտիլ, փառնել նեխութիւն, կու գան պարզական πύ և անած πύծ արմատէն ։ Լատ. pūs թարախ. Ուր. puscinus թարախալից. (Nævius Գ Դար Ն. Բ.) pūrentē թարախտ. շարաւալից. pūto, ere հոտիլ, թարախտիլ. Կիլի. Ուր. pūter թարախ, հու. Ուրիդ. և այլն ։ Գոթ. ful-s, Գերմ. faulen, Fäulniss նեխիլ, փտում. Լիթ. pū-v-ū փախիլ. pū-lei հու, թարախ ։

Բ. Եթէ սակայն բառը յետին է, կրնայ զայ նաև ուղղակի պարս. ڤه հու « թարախ, հու » բառէն. հմմտ. ڤه جراثيم است یعنی آب در اندر و نش افشاد հու կապած է, այսինքն մէջը ջուր հաւաքուած. Vullers Lex, Pers.-Lat. ։